

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ ՎԱՀԱՆԻ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԶԼՄ-ՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ (2010-2015 ԹԹ.)

Ժ. 01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ժամանակակից փուլում աշխարհում և մեր տարածաշրջանում բուռն թափով ընթացող ինտեգրացիոն գործընթացների համապատկերում պետությունները լրջորեն զբաղվում են ոչ միայն դրանց աշխարհաքաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային և քաղաքակրթական, այլև տեղեկատվական հայեցակետերով: Հայրենական ԶԼՄ-ները ոչ միայն նմանատիպ հանրային-քաղաքական քննարկումների կիզակետում են, այլև հաճախ հենց իրենք են օրակարգ առաջադրում՝ երկրի իշխանությանն ու ընդդիմությանն ստիպելով քաղաքական որոշակի դիրքորոշում որդեգրել, վերջինիս առկայության դեպքում՝ նաև հիմնավորել:

Ատենախոսության մեջ քննվել են Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման և ինտեգրացիոն ուղեգծի ընտրության թեմայի արժարժումների հիմնական օրինաչափությունները: Դրանց ուսումնասիրումը սկզբունքային է, քանի որ Հայաստանի ինտեգրացիոն ուղեգիծը հայրենական լրատվադաշտում ընկալվել է ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև աշխարհաքաղաքական կարևորության, քաղաքակրթական մակարդակի և գաղափարախոսության, երբեմն անգամ՝ ազգային ճակատագրի և պատմական առաքելության ծիրում:

Ատենախոսության մեջ ներկայացվել են նաև արտասահմանյան (ռուսաստանյան և արևմտյան) լրատվադաշտի մոտեցումները տարածաշրջանային տեղեկատվական և քարոզչահոգեբանական գործողությունների խորապատկերում: Հայաստանը, լինելով և՛ եվրոպական, և՛ եվրասիական վերապետական կազմավորումների հետաքրքրության ոլորտում, հաճախ է հայտնվել արևմտյան և ռուսաստանյան լրատվամիջոցների էջերում և թողարկումներում: Այդ պատճառով սկզբունքային է օտարերկրյա ԶԼՄ-ներում Հայաստանի հիշատակումների, իմիջի, ներկայանալիության, նույնացումների (ասոցիացիաների) համապարփակ ուսումնասիրումը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս ակտիվորեն ընթացող տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների՝ հայաստանյան և արտերկրյա լրատվադաշտում լուսաբանման առանձնահատկությունները համակարգված և ուսումնասիրված չեն: Ատենախոսության թեման լիարժեք հնարավորություն է տալիս գիտաքննորեն անդրադառնալ Հայաստանի քաղաքական ինտեգրման դիսկուրսում հայրենական և միջազգային լրատվամիջոցների տեղին և դերին, մատնանշել եվրոպական և եվրասիական առաջատար ԶԼՄ-ներում հայաստանյան թեմատիկայի լուսաբանման հիմնական օրինաչափությունները, պարզել Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշմանը հայաստանյան և սփյուռքի ԶԼՄ-ների անդրադարձերի միտումները:

Ատենախոսության առանձնահատկությունը նրա գիտագործնական բնույթն է, ժուռնալիստական և քաղաքագիտական բազային իրողությունների մասին գիտելիքի հիման վրա իրավիճակի գնահատումը, լրատվադաշտի թեմատիկ հրապարակումների ընդհանուր միտումների հանգամանակից և բազմաշերտ ուսումնասիրումը, տեսական նյութի հիմնավորմամբ՝ մեդիաոլորտի հիմնական օրինաչափությունների դուրսբերումը: Ատենախոսության առանձնահատկությունից ելնելով՝ գրականության ցանկում առատ են լրատվամիջոցների, դրանց համացանցային ռեսուրսների և ժուռնալիստական կազմակերպությունների կողմից դրանց ամփոփումների և վերլուծումների հղումները: Այնուամենայնիվ, տեսական կամ գիտագործնական ընդհանրացումներ անելիս հղումներ ենք կատարել լրագրագիտական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հարակից գիտաճյուղերի մասնագիտական գրականության հանրաճանաչ ձեռնարկների:

Ատենախոսության անվանման մեջ գործածված **«աշխարհաքաղաքական կողմնորոշում»** և **«դիսկուրս»** հասկացություններն, ըստ էության, համապատասխանաբար քաղաքագիտական և լեզվաբանական կատեգորիաներ են, որոնք թեև անխուսափելիորեն արժարծվել են քննվող նյութում, սակայն այս դեպքում առավել կարևորվել և առաջին պլան են մղվել դրանց խորհրդանշային նշանակությունները, լրագրողական ընկալումները մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում:

Աշխատության մեջ քննության առնված քաղաքագիտական և սոցիոլոգիական իրողությունները ներկայացվել են բացառապես լրագրագիտության լույսի ներքո: Հայաստանի ինտեգրացիոն ուղեգծի շուրջ լրատվամիջոցների հիշատակումներն ուսումնասիրվել են հիմնականում լրատվանյութերի ժանրային, ձևաչափային և լրագրողական այլ կատեգորիաների համատեքստում:

ՈՍՈՍՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան հայաստանյան և արտասահմանյան ՋԼՄ-ների խմբագրական քաղաքականությունն է Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման դիսկուրսի շրջանակում:

Թեմատիկ լրատվանյութերի բովանդակային վերլուծության համապատկերում անդրադարձ է կատարվել մասնավորաբար հայրենական լրատվամիջոցների կողմից Հայաստանի եվրոպական և եվրասիական ինտեգրման ուղեգծերի մեկնաբանումներին, արևմտյան և ռուսաստանյան լրատվադաշտի կողմից Հայաստանի՝ որպես գործընկերոջ, իմիջի ձևավորման օրինաչափություններին, տարածաշրջանային և տեղական ՋԼՄ-ներում Հայաստանի և եվրոպական ու եվրասիական ինտեգրացիոն նախագծերի առնչությունների անդրադարձերի առանձնահատկություններին, գլոբալ ինտեգրացիոն գործընթացների տեղեկատվական

ապահովմանն ու դրանցում հայկական մեդիադաշտի տեղին ու դերին, Հայաստանի աշխարհաքաղաքական ուղեգծի ընտրության հարցում Հայկական սփյուռքի լրատվամիջոցների տարակերպ դիրքորոշումներին:

Ատենախոսության նպատակն է դիտարկել ՀՀ-ի, Հայկական սփյուռքի, Եվրոպական և Եվրասիական միությունների լրատվադաշտերի խմբագրական քաղաքականությունը Հայաստանին առնչվող ինտեգրացիոն և աշխարհաքաղաքական գործընթացների համապատկերում:

Ատենախոսության խնդիրներն են.

ա) Հայաստանին առնչվող ինտեգրացիոն գործընթացների և արտաքին քաղաքականության եվրոպական ու եվրասիական ուղեգծերի լրագրողական արձագանքների հիմնական օրինաչափությունների դուրսբերումը.

բ) Հայաստանի նկատմամբ եվրոպական լրատվադաշտի մոտեցումների տարբերությունների ընդգծումը ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի գործողության ընթացքում և հետագա փուլերում.

գ) հայաստանյան մեդիադաշտի կողմից ինտեգրացիոն գործընթացների ընկալումների հիմնական առանձնահատկությունների սահմանումը, նկարագրությունն ու վերլուծությունը.

դ) Եվրասիական միության երկրներում Հայաստանի իմիջի ձևավորման օրինաչափությունների վերհանումը.

ե) Եվրասիական տեղեկատվական տարածքի միասնականացման փորձերում հայաստանյան ԶԼՄ-ների մասնակցության գնահատումը.

զ) Եվրոպական և եվրասիական գլոբալ ինտեգրացիոն նախագծերի տեղեկատվական բաղադրիչի կիրառման արդյունավետության գնահատումն ու վերլուծությունը.

է) Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգային հարցերի լրագրողական արձարծումների ուսումնասիրումն ինտեգրացիոն գործընթացների տեղեկատվական համապատկերում.

ը) Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման թեմատիկայով Հայկական սփյուռքի ԶԼՄ-ների հրապարակումների ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրումը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՅԹԸ

Թեմայի մշակվածության աստիճանը ցածր է. որոշ հետազոտական կենտրոններ խնդրո առարկա ժամանակահատվածում ընթացիկ ինտեգրացիոն իրադարձությունների շուրջ անցկացրել են հատուկենտ հանրային հարցումներ, մշտադիտարկումներ, ամփոփումներ ու վերլուծություններ: Մասնավորապես, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հեղինակային խումբն ուսումնասիրել է Մաքսային միությանը ՀՀ անդամակցության թեմայի լուսաբանումը չորս է-

լեկտրոնային լրատվամիջոցներում¹, ՀՀ ինտեգրացիոն գործընթացների լուսաբանումը սփյուռքահայ պարբերականներում²: ՀՀ Սփյուռքի նախարարությունը հրատարակել է «Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ» ձեռնարկը, առկա են մի քանի այլ հետազոտություններ («Հայաստանի հասարակության դիրքորոշումները եվրասիական և եվրոպական ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ», սոցիոլոգիական հետազոտություն «Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ-ի պատվերով³, «Ինտեգրացիան ընդդեմ անվտանգության. Եվրասիական տնտեսական միությանը (Մաքսային միությանը) միանալու Հայաստանի որոշման պատճառների ուսումնասիրություն» Հայաստանի Ամերիկյան համալսարանի պատվերով⁴, և այլն): Այնուամենայնիվ, թեմայի շուրջ եվրոպական, եվրասիական, հայաստանյան և սփյուռքահայ լրատվամիջոցների խմբագրական դիրքորոշումների միասնական ուսումնասիրություն հրապարակի վրա դեռևս չկա:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ սահմանային մակարդակում՝ ժուռնալիստական, քաղաքագիտական և սոցիոլոգիական իրողությունների հաշվառմամբ, ի մի է բերվել 2010-2015 թթ.-ին Հայաստանի ինտեգրացիոն ուղեգծին և աշխարհաքաղաքական կողմնորոշմանն առնչվող տեղեկատվական դաշտը, բազմամակարդակ ուսումնասիրությամբ վերհանվել են հայաստանյան, սփյուռքահայ և արտասահմանյան լրատվամիջոցների հիմնական խմբագրական դիրքորոշումները, հանրային կարծիքի դրսևորումները և ուժային կենտրոնների միջև տեղեկատվական դիմակայության առանձնահատկությունները:

Քանի որ ատենախոսության շրջանակում անհնար է անդրադառնալ Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման թեմայով հրապարակումներ ունեցող հայրենական և միջազգային բոլոր լրատվամիջոցներին, աշխատությունում ներկայացվել է դրանց ճանաչված մասը, որն ատենախոսության վերնագրում պայմանականորեն անվանվել է «**առաջատար**»: Ընտրության մեթոդաբանական հիմքը հայաստանյան և արտասահմանյան լրատվամիջոցների վարկանիշային աղյուսակներում դրանց առաջնակարգ դիրքն է, լայն ներկայացվածությունը համացանցում, զանգվածային լսարանի մեծ ընդգրկումը, այլ լրատվամիջոցներում դրանց հղումների առատությունը և հանրային կարծիքի ձևավորման վրա պո-

¹ Տե՛ս Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունը մեդիա-լուսաբանման մեջ - http://www.noravank.am/upload/pdf/6.Arpi_Manusyan_21_DAR_04_2014.pdf -

² Տե՛ս ՀՀ ինտեգրացիոն գործընթացների լուսաբանումը Սփյուռքի լրատվամիջոցներում 2014 թ. հունվար-հոկտեմբերին - http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13106 -

³ Տե՛ս «Հայաստանի հասարակության դիրքորոշումները եվրասիական և եվրոպական ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ». սոցիոլոգիական հետազոտություն - http://www.soyuzinfo.am/upload/pdf/1.Sociological_Research_in_Armenian.pdf -

⁴ Տե՛ս Ինտեգրացիան ընդդեմ անվտանգության. Եվրասիական տնտեսական միությանը (Մաքսային միությանը) միանալու Հայաստանի որոշման պատճառների ուսումնասիրություն - <https://tcpablog.files.wordpress.com/2014/12/brief1.pdf> -

տենցիալ ազդեցությունը*։ Ատենախոսության մեջ ուսումնասիրված լրատվամիջոցների առաջատար բնույթն արտահայտվել է դրանց զանգվածայնությամբ, հեղինակավոր դիրքով և ընդգրկման լայն շառավղով։ Թեմայի շուրջ հնարավորինս ամբողջական պատկեր ստանալու նպատակով դիտարկվել է և՛ հայաստանյան, և՛ արտասահմանյան (Եվրոպական, Եվրասիական), ինչպես նաև՝ սփյուռքի հայկական լրատվամիջոցների գործունեությունը։

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախոսության տեսական հիմքերը ներառել են ժուռնալիստիկայի տեսության և պատմության հարցերին, միջազգային և քաղաքական լրագրության հիմունքներին, քաղաքական ինտեգրմանը, Հայաստանի, Ռուսաստանի և Եվրամիության արտաքին քաղաքականությանը, հետխորհրդային հասարակական համակարգերի փոխակերպումներին և սոցիալ-տնտեսական իրողություններին, տեղեկատվական քաղաքականության զարգացման միտումներին, Հայկական սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող աշխատություններ, զեկույցներ և գիտական հոդվածներ։

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը ներառել են ինչպես գիտական հանրաճանաչ մեթոդներ՝ պատմական, ընդհանրացման, դիտարկման, համեմատական, վերլուծական, համադրական և այլն, այնպես էլ աշխատության գիտագործնական առանձնահատկությունից և թեմատիկ ուղղվածությունից բխող մեթոդաբանություն, այն է՝ լրատվական միավորների (ուղերձների) բովանդակային, իմաստաբանական և արժեքանական վերլուծություն, լրատվահոսքերի ընդհանուր գաղափարաբանական շերտերի և խմբագրական միտումների ամփոփում և այլն։ Հատկապես լրատվության բովանդակային վերլուծության (կոնտենտ անալիզ) մեթոդը լիարժեք հնարավորություն է տալիս պարզելու թեմատիկ մեդիահոսքերում գործածվող իմաստակիր միավորների խորհրդանշային նշանակությունը, դրանց գաղափարական ծանրաբեռնվածությունը և մեդիայի կազմակերպչական գործառույթի արդյունավետությունը⁵։

* հայաստանյան մեդիադաշտի համար որպես լրատվամիջոցների վարկանիշերի ցուցիչ՝ ընտրվել է www.circle.am ռեսուրսը, որը համակողմանիորեն ներկայացնում է և՛ բուն առցանց, և՛ անալոգ լրատվամիջոցների էլեկտրոնային տարբերակների զանգվածայնությունը։ Միջազգային լրատվադաշտի ուսումնասիրության համար հիմք են դարձել www.similarweb.com, www.alexa.com և www.news.google.com համաշխարհային լրատվական գեներատորների վարկանիշավորման աղյուսակներում ամենաշատը մեջբերվող ու որոնվող այն առցանց լրատվամիջոցները և անալոգ ԶԼՄ-ների էլեկտրոնային տարբերակները, որոնցում առկա են թեմատիկ հրապարակումներ։

⁵ St' u Content Analysis: A Methodology for Structuring and Analyzing Written Material, Washington, D.C., United States General Accounting Office (GAO), 1996, p. 7.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ատենախոսության մեջ 2010-2015 թթ.-ի ընտրությունը պայմանավորված է այդ տարիներին տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների ինտենսիվացմամբ, հետևաբար՝ դրանց լրագրողական լուսաբանումների հաճախակիացմամբ: Եվրոպական միության «Արևելյան գործընկերություն» ծրագիրը գործի է դրվել 2010 թ.-ին, նույն տարում հիմնվել է Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի Մաքսային միությունը: Հայաստանյան լրատվադաշտում մինչև 2013 թ.-ի սեպտեմբերն առատ էին եվրոպական ինտեգրմանը, իսկ 2013 թ.-ի սեպտեմբերից մինչև 2015 թ.-ի ավարտը՝ Մաքսային, ապա՝ Եվրասիական միությանը լրագրողական անդրադարձերը և դիտարկումները:

ՈւՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում և ժողովածուներում տպագրված հինգ գիտական հոդվածներում:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիակալությունը, հիմնախնդրի գիտական մշակվածությունը, հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հիմնավորվել են ատենախոսության գիտագործնական առանձնահատկությունը, միջգիտաճյուղային հետաքրքրությունն ապահովող գործոնները, հետազոտության ժամանակագրական շրջանակների ընտրությունը, ատենախոսության գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂԵԳԻԾԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ

Ատենախոսության առաջին գլխում ներկայացվել են Հայաստան-Եվրոպական կառույցներ փոխգործակցության նախապատմության լրագրողական արձագանքները, ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը՝ որպես եվրո-

պական ՋԼՄ-ների բացահայտում (2010-2013 թթ.), եվրոպական ինտեգրման ընկալումները հայրենական լրատվամիջոցների կողմից, եվրոպական լրատվադաշտի նոր մոտեցումները Հայաստանի մասին հրապարակումներում (2013-2015 թթ.):

Առաջին գլխի չորս ենթագլուխներում հանգամանորեն շարադրվել են նախ եվրոպական լրատվամիջոցների կողմից Հայաստանի՝ որպես գործընկերոջ, ընկալման հիմնական օրինաչափությունները, և ապա՝ հայրենական ՋԼՄ-ների կողմից եվրոպական ինտեգրման ու հայաստանյան արտաքին քաղաքականության եվրոպական ուղեգծի թեմատիկայի արձարծումների առանձնահատկությունները:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հայաստանյան լրատվադաշտի մեդիատեքստերի բովանդակային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Եվրոպան ընկալվել է ոչ միայն որպես ուժային կենտրոն, աշխարհաքաղաքական բևեռ և տարածաշրջանային գերտերություն, այլև քաղաքակրթական, պատմական, մշակութաբանական և գաղափարախոսական հզոր լիցք կրող մեդիակերպար: Եվրախորհուրդը և Եվրամիությունը՝ որպես համաեվրոպական կառույցներ, հայաստանյան լրատվադաշտում ներկայացել են որպես կայացած քաղաքական ինստիտուտներ, ժողովրդավարական արժեքներ, մարդու իրավունքների պաշտպանություն, խոսքի ազատություն, սոցիալական երաշխիքներ և քաղաքացիական հասարակության կառուցում առաջարկող ուժ:

2015 թ.-ին արդեն հստակ էին Հայաստանի ինտեգրացիոն հետաքրքրությունները, ու թեև Եվրոպան դրանցում ամենևին առաջին տեղում չէր, հայրենական լրատվադաշտը շարունակել է ընդգծված հետաքրքրություն ցուցաբերել Հայաստան-եվրոպական կառույցներ գործակցության նկատմամբ: Իր հերթին, եվրոպական լրատվադաշտը ևս խնդրո առարկա ժամանակահատվածում արձանագրել է հայաստանյան թեմատիկայի լուսաբանման յուրատեսակ զարգացում, որի հանգման կետն ու յուրատեսակ նոր մեկնակետը 2015 թ.-ն է՝ պայմանավորված Հայաստանի աշխարհաքաղաքական ոչ եվրոպական ընտրությամբ:

Արձանագրվել է, որ Հայաստանի և եվրոպական կառույցների, մասնավորապես՝ Եվրամիության հետ հարաբերությունների լուսաբանումը և՛ հայրենական, և՛ արևմտյան մեդիադաշտի էջերում անցել է բովանդակային զարգացման զիզգագածն ուղով: Մեկնարկելով «Արևելյան գործընկերություն» ծրագրի կյանքի կոչմամբ, այն է՝ 2009 թ.-ին, դրան հաջորդած վեց տարիներին՝ մինչև 2015 թ.-ը, եվրոպական լրատվական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ արտահայտել է բազմազան, երբեմն՝ տրամագծորեն հակադիր դիրքորոշումներ: Բեկումնային կետն, իհարկե, 2013 թ.-ի սեպտեմբերն էր, երբ Հայաստանը հրաժարվեց մինչ այդ աներկբա թվացող եվրասոցացման պայմանագրի ստորագրումից:

Առաջին ենթագլխում՝ «Հայաստան-Եվրոպական կառույցներ փոխգործակցության նախապատմության լրագրողական արձագանքները», ներկայացվել են Հայաստանի անկախության հաստատումից ի վեր մինչև 2010 թ.-ը հայրենական լրատվամիջոցների կողմից Եվրոպայի և եվրոպական կառույցների մասին անդրադարձերը: Ինդրո առարկա ժամանակահատվածին նախորդած շրջանի ուսումնասիրումը պայմանավորված է լրատվամիջոցների աշխատանքը շարունակական և համապարփակ կերպով ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագիրը. Հայաստանը՝ Եվրոպական ՁԼՄ-ների կիզակետում (2009-2013 թթ.)», արձանագրվում է, որ ծրագրի գործողության սկզբնական փուլում եվրոպական լրատվամիջոցների հրապարակումները Հայաստանը ներկայացրել են որպես «թաքնված հնարավորությունների երկիր», իսկ պաշտոնական Երևանը համարել վստահելի գործընկեր: Եվրոպական առաջատար լրատվամիջոցներն ընդգծված հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի՝ որպես ասոցացվող երկրի, նկատմամբ: Իհարկե, նախորդած տարիներին ևս եվրոպական ՁԼՄ-ներն անդրադարձել են Հայաստանին ու հայկական թեմատիկային, սակայն լուսաբանումները հետևողական, համակարգված ու թիրախային չեն եղել, և լուսաբանումները կրել են կա՛մ ճանաչողական, կա՛մ զուտ լրատվական երանգ:

«Արևելյան գործընկերություն» ծրագրին Հայաստանի մասնակցությամբ լայնորեն լուսաբանվել են մեր երկրի աշխարհաքաղաքական ընտրությանը, ժողովրդավարության և խոսքի ազատության մակարդակին, հանրության սոցիալական բարեկեցությանը, տնտեսության վիճակին վերաբերող, ինչպես նաև հասարակական-քաղաքական այլ հարցեր:

Ծրագրի մեկնարկային փուլում եվրոպական լրատվադաշտը հիմնականում միասնաբար է ընկալել մասնակից վեց երկրներին, նրանց զարգացման մակարդակն ու հնարավորությունները՝ բնորոշելով դրանք որպես հետխորհրդային կամ մերձուսաստանյան տարածք: Հետագայում արդեն՝ ծրագրի՝ գործողության մեջ մտնելու և արդյունքներ գրանցելու ընթացքում, արձանագրվել են որակական տարբերություններն, օրինակ, Հայաստանի և Ադրբեջանի միջև: Բացի այդ, ի սկզբանե ակնհայտ է դարձել, որ եթե Եվրամիությունն առնվազն պաշտոնական-հրապարակային մակարդակում «Արևելյան գործընկերություն» ծրագիրը չի համարել հակառուսաստանյան նախաձեռնություն, ապա եվրոպական ՁԼՄ-ներն այն ընկալել են որպես Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում Ռուսաստանին նետված մարտահրավեր և նրա ազդեցությունն այդ տարածաշրջաններում սահմանափակելու փորձ:

Երրորդ ենթագլխում՝ «Եվրոպական ինտեգրման ընկալումները հայրենական լրատվամիջոցներում», ուսումնասիրվել են եվրաինտեգրման լուսաբանման հար-

ցում հայրենական մեդիադաշտի ընդհանուր միտումները: Արձանագրվել է, որ հայաստանյան և՛ հեռարձակող, և՛ առցանց, և՛ տպագիր լրատվամիջոցների մեծագույն մասը լուռ համաձայնությամբ նախապատվությունը տվել է Եվրոպայի և Եվրամիության հետ զարգացող և խորացող հարաբերություններին: Հայաստանյան լրատվամիջոցներն ու փորձագիտական դաշտը ժանրային և ձևաչափային բազմազան դրսևորումներով անդրադարձել են Եվրոպայի հետ գործակցության հիմնախնդիրներին՝ կառուցելով Հին աշխարհի՝ առավելապես դրական կամ առնվազն չեզոք մեդիակերպար: Եվրոպա հասկացության մեդիաընկալումները հայրենական մեդիահոսքերում հանգել են նախևառաջ դրա և Հայաստանի քաղաքակրթական, պատմական, մշակութային և կրոնական մոտիկությանը: Լրագրողական նյութերի հիմնական առանձնահատկություններից մեկը՝ գաղափարախոսական-էթիկական ուղղվածությունը, առավելապես եվրոպամետ է:

Չորրորդ ենթագլխում՝ «Եվրոպական լրատվադաշտի նոր մոտեցումները Հայաստանի մասին հրապարակումներում (2013-2015 թթ.)», արձանագրվել է 2013 թ.-ից առայսօր եվրոպական լրագրողական հրապարակումներում և փորձագիտական գնահատականներում առկա միտումը՝ նշելու ուղղակի կամ անուղղակի կերպով Հայաստանի՝ ոչ հօգուտ Եվրոպայի կատարած ընտրության փաստը:

Եվրասիական միությանն անդամակցության Հայաստանի որոշման շարժառիթները որոնելիս եվրոպական մեդիադաշտն անդրադարձեր է կատարել Հայաստանի քաղաքական, տնտեսական, էներգետիկ և ռազմական վիճակին: Ընդհանուր առմամբ, եվրոպական հրապարակումներում սկզբնապես ուրվագծվել է ԵՄ-ի «տանուլ տված ճակատամարտի» կամ «կորսված հնարավորության» մոտիվը, իսկ որպես հիմնավորում կամ արդարացում են նշվել Եվրամիության քաղաքականության ապաշնորհությունը, հետխորհրդային երկրների կողմնորոշման հարցում Ռուսաստանի նկրտումները, Հայաստանի իշխանությունների չմտածված, անհասկանալի պահվածքը և այլն:

Ուսումնասիրվել են եվրոպական ԶԼՄ-ների, փորձագիտական մտքի, վերլուծաբանների, ուղեղային կենտրոնների՝ Հայաստանի աշխարհաքաղաքական ընտրությունը քննելիս ձևավորած գաղափարաբանական հայեցակետերը, որոնք կայուն կերպով շրջանառվել են Հայաստան-ԵՄ հարաբերությունների գրեթե ցանկացած հիշատակման մեջ: Մաքսային միությանն անդամակցելու Հայաստանի որոշումը գնահատվել է որպես այսրոպեական և անակնկալ, արձանագրվել է Մոսկվայի անդրկուլիսային հուժկու ճնշումը Երևանի վրա, Եվրամիության հետ գործակցության խորացման համեմատ՝ առավել ծանրակշիռ դեր են ստացել Ռուսաստանի հետ կապված անվտանգության և տնտեսական գործոնները: Գերակա է եղել նաև Եվրասիական միությունը որպես նախկին Խորհրդային միության վերստեղծման փորձ ներկայացնելու միտումը: Հատկապես արցախյան հակա-

մարտության առկայության և Գյումրիում ռուսական ռազմաբազայի տեղակայման հաշվառմամբ եվրոպական ՋԼՄ-ներն արձանագրել են, որ Երևանն ուղղակի ստիպված էր նման որոշում կայացնել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ

Երկրորդ գլխում ներկայացվել են Հայաստանի իմիջը Մաքսային միության անդամ երկրների լրատվամիջոցներում, Եվրասիական միասնական տեղեկատվական տարածության մոդելներն ու Հայաստանը, Մաքսային և Եվրասիական միությունների լուսաբանումները տեղական ՋԼՄ-ներում և հայաստանյան լրատվադաշտի տարակերպ դիրքորոշումները: Այս գլխում շարադրվել են մի կողմից Մաքսային, ապա Եվրասիական միության լրատվադաշտում Հայաստանի իմիջի կերտման և միասնական տեղեկատվական տարածքում ներգրավվելու Երևանի փորձերի օրինաչափությունները, մյուս կողմից՝ հայրենական ՋԼՄ-ներում եվրասիական վերպետական կազմավորումների ոչ միանշանակ ընկալումների հիմնական առանձնահատկությունները:

Չնայած Եվրասիական միության՝ կազմավորված ու փաստացի գործող կառույց լինելուն, ակնհայտ են, ի թիվս այլ չափումների, նաև միասնական տեղեկատվական տարածություն ձևավորելու փորձերն ու որոնումները, որոնց անխուսափելիորեն մասնակցել է նաև Հայաստանը: Եվրասիանտեգրման հեռանկարի շուրջ հայրենական մամուլի հիացական միակարծությունն ամենևին էլ բնորոշ չի եղել Եվրասիական ինտեգրման թեմայի շուրջ հայաստանյան լրատվադաշտի հրապարակումների ոգուն. ՋԼՄ-ների մեծ մասը, գոնե որոշման կայացման ու անդամակցության սկզբնական փուլում, լուրջ վերապահումներ է ունեցել գործընթացի հիմնավորվածության, արդարացվածության և թափանցիկության նկատմամբ:

Հայաստանի և Եվրասիական վերպետական կազմավորումների փոխադարձ տեղեկատվական առնչությունները շատ ավելի բարդ ու ընդգրկուն են, քան եվրոպական ինտեգրման թեմատիկան տեղական ՋԼՄ-ներում: Հայաստանը Ռուսաստանի լրատվամիջոցներում չունի կարևորության և ներկայացվածության այն աստիճանը, ինչն ունեն Եվրասիական միության մյուս անդամները: Երևանը ռուսալեզու մեդիայում ավանդաբար ներկայացվել է որպես բոլոր իրավիճակներում Կրեմլին հավատարիմ գործընկեր և միակ բնական դաշնակիցը Հարավային Կովկասում: ԵՏՄ մյուս անդամների՝ Ղազախստանի և Բելառուսի լրատվադաշտում Հայաստանի կերպարի կերտումը հետևողական չէ, դրա շուրջ արծարծումները տարերային են, երբեմն՝ հակասական:

Հանրային կարծիքը՝ ի դեմս լրատվամիջոցների, ժանրային և ձևաչափային գրեթե բոլոր դրսևորումներով դժգոհություններ, վերապահումներ և պահանջներ է ներկայացրել ռուսաստանյան կողմին Հայաստանի հակառակորդին զենք վաճառելու և ՀԱՊԿ-ի գծով դաշնակցային պարտավորությունները չկատարելու հարցերում:

Առաջին ենթագլխում՝ «Հայաստանի իմիջը Մաքսային միության անդամ երկրների լրատվադաշտում», ներկայացվում են 2013 թ.-ի սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահի հայտարարությունից հետո Մաքսային միության հետ հնարավոր գործակցության ծիրում Հայաստանի մասին լրագրողական անդրադարձերի հիմնական առանձնահատկությունները: Այդ շրջանում Ռուսաստանի լրատվադաշտը, այդ թվում՝ հեռուստատեսությունը, հեղեղվել է Հայաստանի անդրադարձերով՝ պնդելով, որ Երևանը փաստացի քաղաքական, անգամ աշխարհաքաղաքական կարևոր որոշում է կայացրել՝ հոգուտ Մոսկվայի:

Մաքսային միության և Հայաստանի հարաբերությունները մեղիադաշտում քննվել են մի քանի հարթությունում՝ հայաստանյան իշխանությունների կայացրած որոշման հիմնավորվածություն և արդարացվածություն, Հայաստանի՝ որպես միության անդամի, քաղաքական և տնտեսական հեռանկարներ, արտաքին քաղաքական հարաբերությունների վերադարձում մյուս խաղացողների հետ: Կարմիր թելը, սակայն, որն արդեն քանի տարի է՝ առկա է Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցությանը վերաբերող գրեթե բոլոր հրապարակումներում, անվտանգության հիմնահարցն է, որը երբեմն բացարձակացվել է, հասցվել ծայրահեղ մասշտաբների՝ մթազնելով միության բուն առաքելությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Եվրասիական միասնական տեղեկատվական տարածության մոդելներն ու Հայաստանը», ներկայացվել են եվրասիական մեղիայի գաղափարաբանական շերտերի առանձնահատկությունները: Դրա առաջատար ուժը՝ ՌԴ-ն, ակտիվորեն զբաղվել է այն համընդհանուր և բոլորի կողմից ընդունելի գաղափարաբանության (իդեոլոգեմի) որոնմամբ, որը դեպի միասնական հուն կուղղորդի տարածաշրջանի տեղեկատվական հոսքերը: Որպես այդպիսին է դիտվել ռուսաստանյան էլեկտրոնային լրատվամիջոցներով հաճախ ներկայացվող այսպես կոչված եվրասիական քաղաքակրթությունն իր ամենաբազմազան դրսևորումներով՝ սկսած Մեծ Հաղթանակի ընդհանուր գիտակցումից, վերջացրած միջէթնիկ և միջկրոնական համերաշխության քողարկված և անթաքույց կոչերով:

2010-ական թթ.-ի առաջին կեսում Մաքսային միության շուրջ վերպետական մարմինների և ազգային իշխանությունների ձևավորած տեղեկատվական ընդհանուր միտումը, այն է՝ բնական ինտեգրում, առևտրաշրջանառության ակտիվացում, ժողովուրդների բարեկամություն և նմանատիպ այլ կարգախոսներ, արդյու-

նավետ ու համապարփակ պատասխան չեն տվել հանրության բազմաթիվ տեղեկատվական հարցումներին:

Երրորդ ենթագլխում՝ *«Մաքսային և Եվրասիական միությունների գործառնության լուսաբանումները տեղական ՋԼՄ-ներում. հայաստանյան լրատվադաշտի տարակերպ դիրքորոշումները»*, ներկայացվել են հայրենական ՋԼՄ-ներում եվրասիական ինտեգրացիոն գործընթացների լուսաբանման հիմնական առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ, հայաստանյան լրատվադաշտը եվրասիական ինտեգրումը որևէ կերպ չի դիտարկել երկրի ինքնուրույնության ամրապնդման ծիրում՝ այն ընկալելով որպես հետխորհրդային արժեհամակարգի ամրապնդմանը միտված գործընթաց:

Հայրենական լրատվադաշտը հիմնականում անմասն է եվրասիական քաղաքակրթության շուրջ ռուսաստանյան դիսկուրսին, քանի որ այն դուրս է հայաստանյան զանգվածային լսարանի հետաքրքրություններից և օրակարգից: Քաղաքակրթական համատեքստի վերլուծության փոխարեն հայաստանյան ՋԼՄ-ներն առավելապես քննել են եվրասիական տարածքի աշխարհաքաղաքական, տնտեսական և անվտանգության բաղադրիչները: Հայրենական մեդիան և փորձագիտական միտքը, եվրասիական քաղաքակրթության՝ որպես վերազգային գաղափարի, ներդրումից շատ ավելի մտահոգ են Հայաստանի պես մոնոէթնիկ պետության ազգային միասնությունն ապահովող գաղափարախոսության որոնումներով:

ԳԼՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԳԼՈՒԿ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել են արևելաեվրոպական և հարավկովկասյան երկրների եվրահինտեգրումը ՋԼՄ-ների դիրքորոշումներում, ՌԴ-ԵՄ տեղեկատվական դիմակայության օջախները, Հարավային Կովկասը՝ որպես անզիջում տեղեկատվական պայքարի թատերաբեմ, Հայաստանը՝ որպես ՌԴ-ԵՄ տեղեկատվահոգեբանական և դիվանագիտական դիմակայության թիրախ, և արցախյան հակամարտության ու հայ-թուրքական գործընթացի լրագրողական կապակցումները Հայաստանի արտաքին քաղաքական ուղեգծին:

Արձանագրվել է, որ եվրոպական և եվրասիական տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների շուրջ ազդեցության գոտիների պայքարը վաղուց վերածվել է Ռուսաստանի և Արևմուտքի միջև գլոբալ տեղեկատվական դիմակայության:

Առաջին ենթագլխում՝ *«ՋԼՄ-ների դիրքորոշումներն արևելաեվրոպական և հարավկովկասյան երկրների եվրահինտեգրման գործընթացներում»*, ամփոփվել է

այդ երկրներում 2010-2015 թթ.-ին ինտեգրացիոն գործընթացների լուսաբանումների համապատկերը: Այդ շրջանում արձանագրված աշխարհաքաղաքական վերադասավորումները, զինված բախումները, սառեցված հակամարտությունների թեժացումն ու նոր օջախների ի հայտ գալը, միևնույն տարածաշրջանի երկրների հակադիր ինտեգրացիոն կողմնորոշումները ՁԼՄ-ների հրապարակումները՝ որպես ժամանակի տարեգիր, դարձրել են ծայրաստիճան բազմաբղետ, գնահատողական դատողություններով և զգացմունքային բնորոշումներով լի: Առկա են նաև խորքային քաղաքական վերլուծություններ, կանխատեսումներ ու այլազան հրապարակումներ, որոնք Արևմուտքի և Ռուսաստանի բազմագործոն տարածաշրջանային պայքարին հավելել են նաև տեղեկատվական դիմակայության բաղադրիչը: Հարավային Կովկասը՝ որպես Հայաստանի բնական աշխարհագրական միջավայր, առավել ցցուն է ընդգծել մեդիատրամադրությունների հարուստ ներկայանակը՝ սկսած ադրբեջանական բռնապետությունից եվրոպական ՁԼՄ-ների հիասթափությունից, վերջացրած Վրաստանի եվրաինտեգրման, տարածաշրջանում ժողովրդավարության կղզյակի իմիջով ներկայացող երկրի շուրջ ոչ միանշանակ գնահատականներով:

Ռուսաստանի և եվրասիական տարածքի մասին լրատվական հաղորդագրությունների բովանդակային ծանրաբեռնվածությունն արևմտյան ՁԼՄ-ներում ոչ միայն ռացիոնալ է, այլև զգացական. առատ են լրատվահոսքերին տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգեբանական սրություն հաղորդող լրատվական կաղապարները, որոնք էլ Արևմուտքում ձևավորել են Ռուսաստանի և նրա աշխարհաքաղաքական նախաձեռնությունների սոցիալ-հոգեբանական անբարենպաստ իմիջը⁶: Դաշնության հետ ամուր թելերով կապված ուժերն ու երկրները, այս դեպքում՝ Հայաստանը ևս, անուղղակիորեն հայտնվել են նման մեդիատրամադրությունների դիսկուրսում:

Երկրորդ ենթագլխում՝ «ՌԴ-ԵՄ տեղեկատվական դիմակայության օջախները. Հարավային Կովկասը՝ որպես տեղեկատվական դիմակայության թափերաբեմ», համեմատական մեթոդով քննվել են Վրաստանի և Ադրբեջանի թեմատիկ մեդիահոսքերը, Ռուսաստանի և Եվրամիության հետ հարաբերություններին առնչվող հրապարակումների ընդհանուր օրինաչափությունները: Արձանագրվել է, որ եվրոպական ՁԼՄ-ները հետխորհրդային երկրները դիտարկել են որպես անցումային հասարակություններ՝ Բրյուսելին էլ հնարավոր պատմական դեր վերապահելով այդ երկրներում ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու գործում: Ռուսաստանն ընկալվել է որպես հակոտնյա կառույցներ ստեղծող և այդ երկրներում իր ազդեցությունից որևէ կերպ չհրաժարվող երկիր, որի հետ հատկապես ուկրաինական ճգնաժամի սրումից հետո դժվար է պայմանավորվել

⁶ Ст'ю Черных А., Мир современных медиа, Москва, "Территория будущего", 2007, стр. 85.

ու փոխզիջման գնալ: Այս կամ այն քաղաքական-տնտեսական մոդելին ինտեգրումն ընկալվել է ոչ միայն որպես ինքնաբավ քայլ, այլև որպես զարգացման ուղեգծի ընտրություն: Ե՛վ ռուսաստանյան, և՛ եվրոպական ՁԼՄ-ները հնարավորինս ողբերգականացրել և ուղենշային են հռչակել այդ ընտրությունը. երկրների զարգացման մոդելների շուրջ դիսկուրսը մամուլում ծայրահեղ քաղաքականացվել է և բևեռացվել՝ բացառելով երրորդ՝ այլընտրանքային կամ ինքնուրույն ճանապարհը:

Խոսելով Մոսկվայի և «Արևելյան գործընկերություն» ծրագրում նրա դերի մասին՝ արևմտյան լրատվադաշտը գրեթե մշտապես հիշատակել է Ռուսաստանի կայսերական հավակնությունները, Արևելյան Եվրոպայում ներկայությունը վերահաստատելու նրա փորձերը, դրության շարունակական ապակայունացումն Ուկրաինայում, այդ ուղղությամբ քայլերը Մոլդովայում, Ղրիմի բռնակցումը, սառեցված հակամարտությունները թեժացնելու խաղաքարտը և այլն:

Երրորդ ենթագլխում՝ «*Հայաստանը՝ որպես ՌԴ-ԵՄ տեղեկատվահոգեբանական և դիվանագիտական դիմակայության թիրախ*», ուսումնասիրվել են Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման շուրջ եվրոպական և ռուսաստանյան մեդիադաշտերի դիրքորոշումների նմանություններն ու տարբերությունները: Եվրոպական ՁԼՄ-ներում հայաստանյան թեմատիկայի հիշատակումների տարածամանակյա համատեքստի բովանդակային վերլուծությամբ արձանագրվել է, որ 2010 թ.-ի և 2015 թ.-ի Հայաստանի իմիջն արևմտյան լրատվամիջոցներում ամենևին էլ նույնական չէ. Մաքսային միությանն անդամակցելու Հայաստանի ցանկությունը լուրջ սրբագրումներ է մտցրել Եվրոպայի հայաստանյան օրակարգի բովանդակության մեջ: Եվրասիական միության, մասնավորապես Ռուսաստանի մեդիամիջավայրում Հայաստանի իմիջը, հակառակը, ոչ միայն նոր չէ, այլև որոշակի հանգամանքների ներքո պատմականորեն ձևավորվել է և չի փոփոխվել՝ որպես բարեկամ երկրի ու դաշնակցի իմիջ:

Չորրորդ ենթագլխում՝ «*Արցախյան հակամարտության և հայ-թուրքական գործընթացի լրագրողական կապակցումները Հայաստանի արտաքին քաղաքական ուղեգծին*», ներկայացվել են Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի երկու հիմնական առաջնահերթությունների և ինտեգրացիոն ուղեգծերի շուրջ ՁԼՄ-ների ընդհանրացումները:

Ընդհանուր առմամբ, եվրոպական և եվրասիական միասնական տեղեկատվական քաղաքականության ձևավորման փորձերի բովանդակային տարբերություններն առավել ակնառու են հենց Հայաստանի օրինակով: Եվրասիական տեղեկատվական նախաձեռնությունները Հայաստանի համար օգտակար են՝ տեսնելու, անդրադառնալու և հաղթահարելու տարբեր դրսևորումներով շարունակվող խորհրդային գաղափարաբանական նախապաշարումները, իսկ եվրո-

պականը ներկայացել է որպես հնարավոր այլընտրանք կամ երևակայելի հեռանկարի ուղեցույց⁷:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐՈՒՄ

Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացվել են գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացներում Հայկական սփյուռքի գործոնի ընկալումները հայրենական ՁԼՄ-ների կողմից, արևմտյան գաղթօջախների հայկական լրատվամիջոցների դիրքորոշումները ՀՀ ինտեգրացիոն ուղեգծի ընտրության հարցում, եվրասիական ու մերձավորարևելյան սփյուռքի հայկական ՁԼՄ-ները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշման դիսկուրսում:

Հայկական սփյուռքի տարբեր գաղթօջախներում գործող լրատվամիջոցների խմբագրական քաղաքականության վերլուծումը, բնականաբար, պակաս կարևոր չէ, քան Հայաստանի, Արևմուտքի և Եվրասիական տարածքի մեդիադաշտերի հրապարակումների ուսումնասիրումը: Լինելով ոչ միայն դեպի ներս, այլև դեպի դուրս ուղղված որոշում՝ Հայաստանի ինտեգրացիոն մոդելի ընտրությունը պետք է կանխատեսելի հետաքրքրություն առաջացնեն սփյուռքում: Սակայն մեր երկրի աշխարհաքաղաքական ընտրության թեմայի շուրջ հայաստանյան մեդիադաշտին բնորոշ անմիատարրությունն առավել ցայտուն է դրսևորվել Հայկական սփյուռքի լրատվամիջոցներում: Սփյուռքը չափազանց խայտաբղետ է՝ պայմանավորված տարբեր պատմական հանգամանքներով ու ժամանակակից իրողություններով: Այս դեպքում էական է նաև տվյալ գաղթօջախի հայության տեղեկատվության աղբյուրների բազմազանությունը: Եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում և Ռուսաստանում լույս տեսնող հայկական լրատվամիջոցներն օբյեկտիվ պատճառներով տարբեր տեղեկատվական միջավայրերի կրող են: Ըստ այդմ՝ Հայաստանին և նրան առնչվող աշխարհաքաղաքական գործընթացներին ուղղված սփյուռքյան հայացքներն էլ տարբեր են, երբեմն՝ տրամագծորեն:

Առաջին ենթագլխում՝ «Գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացներում Հայկական սփյուռքի գործոնի դիրքարկումը հայրենական ՁԼՄ-ներում», ներկայացվել են հայաստանյան մեդիաօրակարգում հայկական գաղթօջախների առանձնահատկությունների ընկալման հիմնական առանձնահատկությունները: Արձանագրվել է, որ ինչքան մեծ է Հայկական սփյուռքում գործող լրատվամիջոցների ներկայացվածությունը (թեկուզ միջնորդավորված) հայաստանյան մեդիադաշտում, այնքան բարձր է փոխադարձ տեղեկացվածության մակարդակը, ընդ-

⁷ Տե՛ս **Քայադյան Հ.**, Տեղեկատվական հասարակության եզրագծին. Հայաստանը ԱՊՀ-ի և Եվրոպայի միջև, Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր), Պրակ Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001, էջ 5

հանուր խնդիրների ու մարտահրավերների գիտակցումը և հայության համահավաքության ինտեգրատիվ գործառնությունը:

Վերջին երկու տասնամյակում սփյուռքահայ լրատվամիջոցները, դառնալով համընդհանուր հարամիտման (կոնվերգենցիայի) գործընթացի կրողը, որոշակիորեն ինտեգրվել են հայաստանյան մեդիադաշտին: Դրան նպաստել են համացանցի զարգացումն ու համացանցային տիրույթում սփյուռքահայ լրատվամիջոցների ընդգրկվածությունն ու մատչելիությունը: Սփյուռքի հանրաճանաչ պարբերականների մեծ մասն ստեղծել է սեփական համացանցային կայքը՝ հնարավորություն տալով աշխարհի տարբեր ծագերում ապրող հայերին հաղորդակից լինելու գաղթօջախների անցուդարձին ու զարգացումներին: Նմանատիպ նպատակ են հետապնդել նաև սփյուռքում գործող էլեկտրոնային լրատվամիջոցները, հատկապես ռադիոկայանները, որոնք ընդգրկված լինելով համացանցային տիրույթում՝ ունակ են առցանց հեռարձակմամբ կապ հաստատել իրենց ունկնդիրների հետ և նպաստել հայրենիք-սփյուռք կապի ամրապնդմանը⁸:

Երկրորդ ենթազխում՝ *«Արևմտյան գաղթօջախների սփյուռքահայ լրատվամիջոցների դիրքորոշումները ՀՀ ինտեգրացիոն ուղեգծի ընդհանուր հարցում»*, արձանագրվել է, որ Հայաստանի և Հայկական սփյուռքի ընդհանուր տեղեկատվական տարածքը դեռևս թույլ է: Դրա միասնականացման փորձերը վերջին տարիներին թեև զգալի են և անգամ ինստիտուցիոնալ կարգավիճակ են ձեռք բերել (Լրագրողների համահայկական համաժողովների անցկացում), ամեն դեպքում, համահայկական խնդիրների շուրջ տեղեկատվական միջավայրերը, ազդակները, աղբյուրներն ու ընկալումները Հայաստանում և սփյուռքում բացարձակապես տարբեր են:

Հայաստանի ինտեգրացիոն ուղեգծի շուրջ զարգացումներն, ընդհանուր առմամբ, անբավարար են ներկայացվել սփյուռքի հայկական լրատվամիջոցներում: Ընդ որում, խնդիրը փոխադարձ է. սփյուռքի մամուլում հայաստանյան իրողությունների ընկալումն աղուտ ու միջնորդավորված է, տեղական մեդիան էլ վատ է պատկերացրել, հետևաբար՝ քիչ է լուսաբանել հայկական գաղթօջախների անցուդարձը:

Երրորդ ենթազխում՝ *«Եվրասիական և մերձավորարևելյան սփյուռքահայ ՁԼՄ-ները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշման դիսկուրսում»*, փաստարկվել է, որ ի դեմս սփյուռքի հայկական լրատվամիջոցների՝ հայաստանյան մեդիադաշտը կարող է ունենալ սկզբնաղբյուրների բացառիկ ցանց: Ընդ որում, խոսքը և՛ վերատպումների, և՛ սփյուռքահայ ՁԼՄ-ների հետ կապեր հաստատելու և նրանց հետ մշտական կապի մեջ գտնվելու մասին է: Հայաստանյան և սփյուռքի

⁸ Տե՛ս **Հովսեփյան Մ.**, Ռադիոժողովրդակալիստիկայի հիմունքներ. պատմություն և տեսություն (դասախոսություններ), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 57

լրատվամիջոցները միմյանց համար կարող են ծառայել որպես յուրօրինակ թղթակցական կետեր, և ՋԼՄ-ների համահայկական ցանցը կարող է ազգային նույնականացման հզորագույն գործիք դառնալ:

Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման և ինտեգրացիոն ուղեգծի ընտրության հարցը սփյուռքահայ լրատվամիջոցներում առանձնահատուկ նրբերանգ ունի. դիսկուրսի կիզակետում առավել հաճախ ոչ թե բուն քաղաքական իրողություններն են, այլ հայ ժողովրդի քաղաքակրթական պատկանելության հարցը: Հատկապես Եվրոպայում հրապարակվող հայկական և հայալեզու լրատվամիջոցներն առատ են Հին աշխարհամասում հայության դերի քննարկումներով, որոնք սովորաբար հանգել են Եվրոպական քաղաքակրթության մեջ հայության ունեցած մեծ վաստակի գնահատմանը: Հաշվի առնելով, որ ամենահայահոծ գաղթօջախները Ռուսաստանում, ԱՄՆ-ում և Ֆրանսիայում են, որոնք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներն են, սփյուռքն իր տեղեկատվական ցանցով կարող է լուրջ նպաստ բերել արցախյան հիմնախնդրի քարոզչական ճակատում:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 2010-2013 թթ. Հայաստանը Եվրոպական լրատվադաշտում ընկալվել է որպես հուսալի գործընկեր, քաղաքական և տնտեսական զարգացման այլընտրանքային ուղիներ փնտրող, կենսամակարդակի Եվրոպականացման և տնտեսության բազմազանեցման կողմնակից երկիր: Ասոցացման պայմանագրի բանակցությունները Եվրոպական լրատվադաշտում հայաստանյան թեմատիկայի յուրատեսակ «տեղեկատվական պայթյուն» են առաջացրել: 2013 թ.-ի սեպտեմբերին Եվրոպական լրատվադաշտը հիմնավորապես վերանայել է Հայաստանի իմիջը՝ այն առաջնահերթորեն կապակցելով մեր երկրում ռուսաստանյան ազդեցության հետ:

2. Հայաստանյան լրատվամիջոցների բացարձակ մեծամասնությունը, չնայած քաղաքական հարցերում չեզոքություն պահպանելու էթիկական պահանջին, Հայաստանի Եվրասոցացման անթաքույց կողմնակից է: «Արևելյան գործընկերության» գործողության ընթացքում հայրենական լրատվադաշտը նկատելիորեն մերձեցել է Եվրոպական տեղեկատվական տարածքին, բազմազանեցրել սկզբնաղբյուրների ցանցն ու Եվրոպական օրակարգը լայնորեն փոխադրել հայաստանյան մեդիափրականություն:

3. 2014-2015 թթ.-ին հայրենական լրատվամիջոցների հրապարակումներն առանձնացել են, մի կողմից, Եվրամիության հետ պայմանագրի ստորագրման տապալման հետևանքների շուրջ ընդհանրացումներով և եզրահանգումներով, մյուս կողմից՝ Եվրասիական միության մասին ընդարձակ տեղեկատվական ար-

շավով: ԵՏՄ-ն, սակայն, անգամ 2015 թ.-ին՝ Հայաստանի անդամակցության առաջին տարում, հայրենական լրատվամիջոցներում ընդհանուր առմամբ չի ինստիտուցիոնալացվել, չի ընկալվել որպես գործուն վերաբերական կազմավորում: Հայաստանյան մեդիադաշտում թույլ է ԵՏՄ-ի ինտեգրատիվ գործառնության գիտակցումը:

4. 2013 թ.-ի երկրորդ կիսամյակը հայրենական մեդիաոլորտի ընկալմամբ կարելի է ընդհանրականացված բնորոշել որպես հուսախաբության և կորսված հնարավորությունների, 2014 թ.-ի առաջին կիսամյակը՝ համակերպման և Եվրասիական ինտեգրման հիմնավորման փորձերի, 2014 թ.-ի երկրորդ կիսամյակը՝ Հայաստանի կատարած ընտրության անբեկանելիության գիտակցման և Եվրոպայի հետ գործակցության նոր ուղիների որոնման փորձերի շրջան: 2014 թ.-ից ի վեր Եվրամիության հետ գործընկերության թեմայի առաջնայնության գիտակցում այլևս չի եղել:

5. Եվրասիական միության երկրներից միայն Ռուսաստանի Դաշնությունն է, որի լրատվամիջոցներում առկա է Հայաստանի՝ ավանդաբար ձևավորված դրական իմիջ՝ անդավաճան գործընկերոջ և դաշնակցի կարգավիճակով: Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի լրատվադաշտերում հայկական թեմատիկայի ներկայությունը չափազանց թույլ է, տեղեկատվական առաջնորդումը՝ զրոյական: Հայաստանում կարևոր իրադարձությունների ծավալման դեպքում («Էլեկտրիկ Երևան», 2015 թ., արցախա-ադրբեջանական քառօրյա պատերազմ, 2016 թ. և այլն) ՌԴ լրատվադաշտը ժանրային և ձևաչափային ամենատարբեր դրսևորումներով, այդ թվում՝ հեռուստաբանավեճերով և քննարկումներով, անդրադարձել է թեմային:

6. Հայաստանը փորձել է իր համեստ նպաստը բերել Եվրասիական միության ընդհանուր տեղեկատվական տարածության ձևավորման փորձերին, ներկայացվածությունն ապահովել Եվրասիական տարածքի մի քանի առաջատար լրատվամիջոցներում: Եթե անգամ ԵՏՄ-ն տեղեկատվական ուղղորդված և լայնածավալ արշավների կազմակերպման փորձեր է արել, դրանք ուղղվել են ներքին լսարանին:

7. Արժեքանական, գաղափարախոսական և քաղաքակրթական մակարդակներում հայրենական ԶԼՄ-ների մեծ մասը նախընտրել է Եվրամիության հետ ասոցացումը: Ի հակադրություն՝ Եվրասիական տնտեսական միությունը, հայաստանյան ԶԼՄ-ների ձևավորած գաղափարաբանությամբ, միանձնյա կամ միակենտրոն որոշումներ ընդունող, պակաս հաշվետվողական, ոչ ժողովրդավարական, մարտավարական հարցեր լուծող կառույց է:

8. Հայրենական ԶԼՄ-ների համար Հայաստանի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունները, մի կողմից, ռազմավարական են, առաջնահերթ և

սկզբունքային, մյուս կողմից՝ հաճախ ցավագին է ընդունվել Հայաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում ռուսաստանյան ազդեցության ամրապնդման ցանկացած քայլ: Ըստ տեղական լրատվադաշտի գաղափարաբանության՝ Հայաստանը չափազանց խոցելի է իր համար ոչ ձեռնտու առաջարկները մերժելու հարցում:

9. ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագիրն ուղեկցվել է աշխարհաքաղաքական վերադասավորումների տեղեկատվական ամրագրմամբ: Փոխարենը, Ռուսաստանը «փափուկ ուժի» սլաքներն ուղղել է դեպի «Արևելյան գործընկերության» մասնակից երկրներ՝ փորձելով հետ պահել նրանց վերահաս եվրոպական ընտրությունից: Ուկրաինական ճգնաժամն ավելի է խորացրել արևմտյան և ռուսաստանյան մեդիադաշտերի միջև անջրպետը:

10. Հայաստանի և Հայկական սփյուռքի լրատվամիջոցների փոխհղումային համակարգը և միմյանց տեղեկատվական շահերի ու հետաքրքրությունների մասին պատկերացումներն անբավարար են: Ի դեմս գաղթօջախների հայկական լրատվամիջոցների՝ աշխարհասփյուռ հայությունը կարող է ունենալ տեղեկատվական անվտանգության բացառիկ գործիք, որը հարկ եղած դեպքում կարող է ծառայել նաև համահայկական խնդիրների շուրջ միասնական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

11. Արևմտյան լրատվադաշտում Հայաստանի իմիջը բարելավելու նպատակով առաջարկել ենք հայաստանյան լրատվամիջոցներին առավել հաճախ և հետևողական կերպով անդրադառնալ եվրոպական կառույցների հետ Հայաստանի գործակցության լրահոսին՝ կենտրոնանալով Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի նոր սերնդի նախաձեռնությունների վրա: Անհրաժեշտ է ձերբազատվել արտաքին քաղաքական ուղեգծի ընտրության ճակատագրականության և բացառիկության մասին ուռճացված թեզերից: Հայրենական ԶԼՄ-ներում օտարալեզու լրագրողական տարրի առկայությունը զգալիորեն կոյուրացներ դեպի դուրս ուղղված նման լրատվահոսքերի շրջանառությունը:

12. Եվրասիական տեղեկատվական տարածքում Հայաստանի իմիջի կերտման խնդիրներն այլ բնույթի են. այս դեպքում, հակառակը, անհրաժեշտ է կենտրոնանալ սեփական ինքնաբավության, տնտեսական և մարդկային ռեսուրսների կարևորության ընդգծման վրա: Միության անդամներին ուղղված լրատվահոսքերում լիովին հնարավոր է պահպանել սեփական չիրացված ներուժի գաղափարաբանական շերտը՝ քողազերծելով ռուսաստանյան տեղեկատվական դաշտի միջետրը:

13. Հայրենական ԶԼՄ-ներին անհրաժեշտ է լուրջ վերապահումներով մոտենալ առհասարակ բոլոր ինտեգրացիոն նախագծերին՝ և՛ եվրոպական, և՛ եվրասիական, և՛ ցանկացած այլ: Մեր լրատվադաշտում դեռևս իշխող է այն մտայնությամբ

յունը, թե Եվրամիության կամ Եվրասիական միության հովանու ներքո Հայաստանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, անվտանգության և այլ խնդիրներ առավել դյուրությամբ են լուծվելու: Աշխարհաքաղաքական վերափոխումների նման սրընթաց ժամանակներում լրագրողների քաղաքագիտական գրագիտությանն հարցն առավել քան արդիական է դարձել:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Եվրոպական և Եվրասիական գլոբալ ինտեգրացիոն գործընթացների տեղեկատվական ապահովումը**, “Вестник Российско-Армянского Университета: гуманитарные и общественные науки”, Ереван, 2016, N 1 (22), էջ 56-62
2. **Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների տեղեկատվական դաշտի որոշ իրողություններ**, «ԵՊՀ ՈւԳԸ Գիտական հոդվածների ժողովածու. հասարակական գիտություններ», Երևան, 2015, N 1.7 (10), էջ 144-149
3. **Հայաստանի Եվրաինտեգրումը Եվրոպական լրատվադաշտի ընկալմամբ**, «21-րդ դար», Երևան, 2015, N 5 (63), էջ 95-107
4. **Եվրաինտեգրման ընկալումները հայաստանյան մամուլում**, «21-րդ դար», Երևան, 2015, N 2 (60), էջ 135-147
5. **Լրատվադաշտի և խոսքի ազատության ընկալումների փոփոխությունները հետխորհրդային տարածքում**, «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈւԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», Երևան, 2013, N 3 (հասարակական գիտություններ), էջ 301-305

ДАВИТ ВАГАНОВИЧ САРГСЯН

**ВЕДУЩИЕ ОТЕЧЕСТВЕННЫЕ И МЕЖДУНАРОДНЫЕ СМИ В ДИСКУРСЕ
ГЕОПОЛИТИЧЕСКОЙ ОРИЕНТАЦИИ РА (2010-2015 ГГ.)
РЕЗЮМЕ**

**Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук
по специальности 10.01.06 – «Журналистика»**

**Защита состоится 18.05.2016г. в 14:30 часов на заседании
специализированного Совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу:
Ереван, улица Хачатура Абовяна 52/а, ЕГУ, корпус филологического
факультета, аудитория 202.**

В диссертационной работе рассмотрены основополагающие особенности освещения интеграционных процессов Армении в отечественных, европейских и евразийских СМИ. В теоретических разделах представлены основные закономерности восприятия дискурса геополитического выбора Армении местными, европейскими и российскими печатными и электронными изданиями. Представлены также ключевые аспекты политики информационного обеспечения европейских и евразийских интеграционных процессов, а также - СМИ Армянской Диаспоры в ориентирах геополитического выбора Армении.

Научная новизна работы состоит во многостороннем описании актуального процесса освещения интеграционных проектов – “Восточного партнерства” и Евразийского Экономического Союза, на основании теоретических и прикладных исследований. Используются методы сравнительного и особенно контент анализов.

Во вступлении описаны актуальность выбора темы, степень ее научной обработанности, объект, цели, задачи, методологические основы и методы исследования, научная и теоретическая новизна диссертационной работы.

Диссертация состоит из четырех глав, выводов и обобщений и списка литературы.

В первой главе - «Вектор европейской интеграции Армении в освещении отечественных и международных СМИ», рассматриваются позиции передовых западных СМИ относительно геополитического выбора Армении. Даны трактовка европейского и евразийского интеграционных векторов Армении европейской прессой, особенности формирования образа Армении как партнера, освещения шагов официального Еревана в ходе программы “Восточное партнерство”. Анализируются также основные особенности журналистских подходов европейской прессы в вопросе интеграционных векторов Армении.

Рассмотрена также роль СМИ Армении в дискурсе геополитического выбора страны, в частности, даны трактовка процесса европейской интеграции Армении местной прессой, особенности формирования образа Европейского союза как партнера, а также специфика освещения точек соприкосновения политики Армении и европейских интеграционных проектов в местных СМИ. Изложены основные векторы журналистских подходов в европейской внешнеполитической повестке дня.

Во второй главе - «Взаимосвязи Армении и евразийских интеграционных проектов в региональных и местных СМИ», рассматриваются основные особенности информационного обеспечения евразийских интеграционных процессов. Изложены основные тренды информационного составляющего и освещения евразийских интеграционных проектов, в частности – Таможенного и Евразийского союзов, в Армении. Утверждается, что страны-участницы этих образований еще окончательно не разработали единую информационную политику, нацеленную как на аудиторию Евразии, так и на мировое сообщество, в частности на Запад. В свою очередь, западные СМИ периодически подвергают критике попытки РФ воссоздать интеграционные формирования в Евразии и скептически относятся к ним. Констатируется, что без активизации создания релевантного медиапродукта евразийские интеграционные проекты не будут объективно восприняты как на Западе, так и непосредственно в самих странах этих объединений.

В третьей главе – «Информационное обеспечение европейской и евразийской глобальных интеграционных проектов и их освещение в СМИ», рассматриваются актуальные особенности тематических отзывов отечественных и международных СМИ в свете активизации региональных интеграционных процессов в современном этапе. Анализируется информационная составляющая политической интеграции восточноевропейских и южнокавказских постсоветских республик. Констатируется, что в 2010-2015 гг. поиски Арменией своей геополитической ориентации наглядно демонстрируют все нюансы информационного противоборства между силовыми центрами.

В четвертой главе - «СМИ Армянской Диаспоры в ориентирах геополитического выбора Армении», рассматриваются ключевые позиции передовых СМИ Армянской Диаспоры на тему геополитического выбора Армении, а также – представленность медийной сферы Диаспоры в СМИ Армении. В контексте информационных интересов мирового армянства вкратце изложены основные тренды освещения интеграционных процессов вокруг Армении в средствах массовой информации Армянской Диаспоры.

В заключении представлены основные обобщения и выводы, а также - список литературы.

DAVIT SARGSYAN
THE LEADING LOCAL AND INTERNATIONAL MASS MEDIA IN THE DISCOURSE
OF THE GEOPOLITICAL ORIENTATION OF ARMENIA (2010-2015)
SUMMARY

Dissertation for the academic degree of Candidate of Philological Sciences
in specialty 10. 01.06 - «Journalism»

Defense day: 18.05.2016 at 14:30 pm at the session of the HAC Specialized
Council (Higher Attestation Commission) 012 at Yerevan State University.
Address: Republic of Armenia, Yerevan, Abovyan str. 52/A, YSU,
Faculty of Philology, room N 202

The dissertation is devoted to the main features of the coverage of the integration processes in Armenia in domestic, European and Eurasian media. The basic theoretical points present the main perceptual patterns of the discourse of Armenia's geopolitical choice in terms of the European and Russian leading print and electronic media. Key aspects of the information policy of the European and Eurasian integration processes, as well as the role of the Armenian Diaspora's media in terms of Armenia's geopolitical orientation are also presented.

The scientific meaning of this dissertation contains a comprehensive description of an actual process – the coverage of integration projects, “Eastern Partnership” and the Eurasian Economic Union. Both theoretical and applied explorations have been done. Methods of comparative and content analysis have been applied.

The introduction describes the actuality of the topic, the review of scientific references, research object, goals, issues, methodological foundations, scientific and theoretical novelty of it.

The dissertation consists of four chapters, conclusions and bibliography.

The first chapter, “The vector of Armenia's European integration in terms of domestic and international mass media coverage”, discusses the perceptions of the leading Western media in terms of geopolitical choice of Armenia. Particularly, media interpretations of the European and Eurasian integration paths of Armenia by the European press, the patterns of imagemaking process of Armenia as a counterpart, the media coverage of Armenia's steps during the “Eastern Partnership” initiative have been scrutinized. The main features of the coverage of the integration vectors of Armenia in the European press are also presented.

Then, the role of the Armenian media in the local discourse of the geopolitical choice is discussed. Namely, media interpretations of the so-called “European integration path” of Armenia, the process of imagemaking of the European Union as a

partner of Armenia, the coverage of the links between Armenian policy and European integration global projects, especially the “Eastern Partnership”, are examined.

In the second chapter, “The links of Armenia and Eurasian integration projects in the regional and local mass media”, main aspects of the informational field of Eurasian integration processes are given. The points generally link to the public relations and news-coverage fields of the Customs Union and the Eurasian Economic Union. It's stated that the members of these organizations haven't finally worked out and determined a single information policy, aimed not only at the Eurasian internal audience, but also the rest of the world, especially to the West. In turn, the Western media periodically criticizes Russian attempts to restore integration formations in Eurasia, and are sceptical to them. It's emphasized that without active release of relevant media product Eurasian integration attempts can be successful neither in the West, nor in the member-states of those organizations.

The third chapter, “Informational aspects and coverage of the European and Eurasian global integration projects”, discusses informational aspects of the political integration of the post-Soviet states in the Eastern Europe and South Caucasus. It's stated that Armenia's attempts to choose between geopolitical powers of the world during 2010-2015 had been reflected in all the shades of informational confrontation between Russia and the West.

The fourth chapter, “Mass media of the Armenian Diaspora in terms of Armenia's geopolitical choice guides”, discusses the key perceptions and positions of the leading media of the Armenian Diaspora on the subject of the Armenia's geopolitical choice. The issue of the Diaspora media sphere's representation in Armenia-based newsrooms is also scrutinized. In the context of the informational interests of Armenians worldwide the main trends of covering integration processes in the Armenian Diaspora's media are summarized.

In conclusion, the main theses and bibliography of the dissertation were presented.